ՖՐԱՆՍԻԱ—ԼԻՈՆ

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԵՆԹ ԷԹԻԵՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՎՈ ՕԾՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՎ

Մայիսի 24-ին Սենթ Էթիենի գաղութը տոնեց իր եկեղեցիին օծման երրորդ տարեդարձը: Այս առթիվ տեղվույս հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Զատիկ աբեղա Ավետիքյանին և եկեղեցվո վարչության հրավերով այստեղ ժամանած էր Լիոնի և շրջակայից Հայրապետական պատվիրակի փոխանորդ գերաշնորհ Տ. Նորվան եպս. Զաքարյան: Սուրբ պատարագին ընթացքին, «Զի ողորմած»-են առաջ պատարագիչ սրբազան հայրը ուրար կրելու իրավունք շնորհեց եկեղեցվույս երկարամյա սպասարկող տիար Մանվել Հելվաճյանին:

Սրբազան հայրը իր քարոզին մեջ հատկապես շեշտը դրավ վարչական և կազմակերպչական աշխատանքի վրա, Սենթ Էթիենի և Սեն Շամոնի հավատացյալներեն խնդրելով, որ մոտեն հետևին իրենց եկեղեցիին կյանքին, որպեսզի «պարզ հանդիսատեսներ չըլլան», ամեն ինչ թողնելով հոգևոր հովիվին և վարչության ուսերուն վրա ու ավելցուց. «Եկեղեցվո շենքը շինելը բավական չէ, պետք է, որ յուրաքանչյուրդ դառնա այս եկեղեցիին համար կենդանի քար մը»:

Պատարագին երգեցողությունը կատարեց Վիեն քաղաքի նորակազմ դպրաց դասը: Պատարագին ավարտին եկեղեցվո սրահին մեջ, ի պատիվ սրբազան հոր, տեղի ունեցավ ընդունելություն:

ՈՒՐԱՐԻ ՏՎՃՈՒԹՅՈՒՆ

Հոյակապ ավանդություն դարձած է արդեն Պոլսո Ս. Խաչ դպրեվանքին շրջանավարտներուն հավաքը Հոգեգալստի տոնի օրը: Այս տարի դպրեվանքցիները իրենց հանդիպումին համար ընտրած էին Լիոն քաղաքը: Շրջանիս բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Նորվան եպս. Զաքարյանի հրամանով եկեղեցական վարչությունը անոնց տրամադրած էր Ս. Հակոբ Մայր եկեղեցվո հանդիսությանց մեծ դահլիճը, ուր երեք օր իրարու հաջորդեցին աշխատանքային նիստերը և խրախճանքի պահերը:

Հունիսի 7-ին, կիրակի օր, Հոգեգալստյան տոնին առթիվ, ներկա գտնվեցան Եվրոպայի չորս անկյուններեն եկած մոտ հարյուր հիսուն դպրեվանքցիներ (Ֆրանսա, Մեծ Բրիտանիա, Զվիցերիա և Գերմանիոյ Ֆեդերատիվ Հանրապետություն): Ս. Պատարագին ընթացքին սրբազան հայրը դըպրության աստիճան և ուրար կրելու իրավունք տվավ երեք նախկին պոլսեցիներու, որոնք տարիներե ի վեր կծառայեն Լիոնի և Բոն Տը Շերյուիի եկեղեցիներուն մեջ:

Պատարագիչն էր Պոլսո Պյուլուքտերե թաղամասին նախկին հոգևոր հովիվ, այժըմ Լիոնի Ս. Հակոբ Մայր եկեղեցվո ծըխատեր քահանա արժանապատիվ Տ. Իսահակ խաչակիր քահանա Հեքիմյան: Օրվա պատգամը տվավ Մարսելիոյ Մայր եկեղեցվո հովիվ հոգեշնորհ Տ. Գարեգին վրդ. Պեքճյանը: Ս. խորանին կսպասարկեին դպրեվանքին սաներեն խումբ մը սարկավագներ և ուրարակիրներ:

Ս. պատարագեն վերջ մասնավոր հոգեհանգստյան պաշտոն կատարվեցավ դըպրեվանքին հիմնադիր և Կ. Պոլսո արժանընտիր պատրիարք հոգելույս Տ. Գարեգին սրբ. արքեպիսկոպոս Խաչատուրյանին հոգվույն համար:

*
* *

Այս տարվան հունիսեն ի վեր ֆրանսերեն լեզվով լույս կտեսնե Լիոնի հայոց եպիսկոպոսարանի «Եկեղեցի» լրատուն, որուն նպատակն է մեր եկեղեցվո համար լրատվության աղբյուր մը ըլլալ ֆրանսական կրոնական և հանրային, ինչպես նաև Ֆրանսայի մեջ լույս տեսնող լատինատառ հայկական թերթերուն համար: Այս թերթիկին մեջ գլխավորաբար տեղ կգտնեն Վեհափառ Հայրապետին և Մայր Աթոռի դիվանատան կողմեն հղված կոնդակներն ու հաղորդագրությունները, շրջաբերականներ, հայտարարություններ, ինչպես նաև լուրեր մեր բոլոր թեմերեն և հատկապես Լիոնի շրջանեն: Այս թերթիկը արդեն մեծ հետաքրքրություն ստեղծած է թե՛ էկյումենիկ շարժման և թե՛ թերթերուն խմբագրությունն-

ներուն մոտ, որոնք շատ անգամ անտեղյակ կմնան մեր եկեղեցական կյանքեն:

ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՁԱՅՆԱՍՓՅՈՒՌ

Ապրիլի 1-ին Լիոնի բոլոր եկեղեցիները տոնեցին շրջանիս մեջ գործող Ռադիո Ֆուրվիեր համաքրիստոնեական ձայնասփյուռին հիմնադրության հինգերորդ տարեդարձը: Այս ձայնասփյուռին հիմնադիրներն են՝ Կաթողիկե, Հույն Օրթոդոքս, Բողոքական (Ավետարանական և Լատինական), Անգլիկան և Հայ Առաքելական Եկեղեցիները: Կայանը ունի վարչական, պատասխանատու ղեկավարներու հանձնախումբ մը, որուն կմասնակցի գերաշնորհ Տ. Նորվան եպս. Զաքարյան:

Մեր եկեղեցին զանազան հաղորդումներ կսփռե, կրոնական և մշակութային հայտագրեր, ինչպես նաև լուրեր Մայր Աթոռեն և Մայր Հայրենիքեն: Սուրբ Ծընունդին առթիվ հայերեն և ֆրանսերեն լեզվով կկարդացվի Վեհափառ Հայրապետին ուղերձը:

Ձայնասփյուռը 1986-են ի վեր իր ունկընդրության սահմանները ընդլայնած է մինչև Ռոն Ալփ շրջանին հարավային քաղաքները՝ Վիեն, Գրընոպլ, Սենթ Էթիեն և Վալանս:

ՍԱՀԱԿ ՍՐԿ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ